ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան 0010, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ,
Հեռ.՝+37491700974,**Էլ. հասցե՝**foi@foi.am, **www.foi.am**

07.08.2023
351-31

Պետական եկամուտների կոմիտեի
նախագահ Ռուստամ Բաղասյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Բաղասյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. 2022 թվականի հունվարի 1-ից մինչ օրս «Երկակի նշանակության ապրանքների արտահանման, Հայաստանի Հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փոխադրման, ինչպես նաև երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողության մասին» ՀՀ օրենքի իմաստով հսկվող ապրանքների արտահանման, ՀՀ տարածքով տարանցիկ փոխադրման և հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցման կանոնների խախտման (ներառյալ՝ առանց համապատասխան թույլտվության կամ կեղծ փաստաթղթերի հիման վրա կամ թույլտվության պայմաններին չհամապատասխանող եւ այլն) քանի՞ դեպք է արձանագրվել,
2. Նույն ժամանակահատվածում հսկվող ապրանքների արտահանման, ՀՀ տարածքով տարանցիկ փոխադրման և հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցման կանոնների խախտման դեպքերից քանի՞սն է ենթադրել քրեական, քանի՞սը՝ վարչական պատասխանատվություն,
3. ՀՀ քրեական օրենսգրքի կամ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի ո՞ր հոդվածներին են վերաբերել վերոնշյալ խախտումները:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան